

կեն, իսկ կատուլակն իբր նուազ պիղծ քան միւսները, կը խրատէ «եօթն ջրով լուանալ եւ խաչ հանել տալ», եւ ապա կրնայ գործածուիլ (կր. Եզկ.):

Ալաւկայ որդին սակայն կը գերազանցէ մանրամասնութեանց մէջ: Բուն իսկ իւր յիշած «զիտնականներէն» է նա, որ հետեւեալ կերպով կը ցուցադրէ մեզ իւր հմտութիւնը: Մինապիղծ չոր աղի ամանը կը սահմանէ «ցամաք անօթ» ընել, այս ինքն ցամաք նիւթոց միայն գործածել- իսկ եթէ աղը թաց է, ամանն ալ կատարելապէս պղծուած է, եւ պէտք է դուրս ձգել: Անպիտան է եւ այն պոյտն՝ որոյ մէջ պիղծ աղով կերակուր եփուած է, եւ այն անօթներ՝ ուր մտած է այն՝ խորտակելի են: Մուկն եթէ կարասի վրայ ընկած է, ամանն եւ անոր բովանդակածը մաքուր կը մնան: Եթէ դատարկ ու չոր կարասի մէջ ընկաւ, ցամաք նիւթոց անօթ ընելու է զայն, իսկ եթէ թաց էր, խորտակելի է (Գ): Եթէ մկան դին գտուի «ի կործ» դրուած տաշտի կամ թափուրի կամ ուրիշ որ եւ է անօթի վրայ, փայտեղէնը պէտք է քերել, եւ խեցեղէնը կոտրել, իսկ մետաղեայն տաք ջրով խաշել միայն, եւ այնուհետեւ սուրբ է: Եթէ գտուի քրձի կամ մորթաղի վրայ,